Հավելված
Հաստատված է Հայաստանի
Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2025 թվականի
սեպտեմբերի 24-ի N325-Լ
որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2026 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

1. Էներգետիկայի բնագավառ 5

1.1. Իրավական բարեփոխումներ 5

1.2 Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում.....7

1.3. Սակագնային քաղաքականություն 16

1.4. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ 20

1.5. Վերականգնվող էներգետիկա 25

2. Ջրային ոլորտ 32

2.1. Ջրամատակարարման գրաֆիկների ծանուցում, խմելու ջրի սպառման ծավալների մոնիթորինգ և բաժանորդ դառնալու գործընթացի պարզեցում 32

2.2. Սակագնային քաղաքականություն 34

3. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ 35

4. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն 42

5. Սպառողների շահերի պաշտպանություն 44

5.1. Սպառողների դիմումների քննարկում 44

5.2. Սպասարկման որակի ցուցանիշներ 46

6. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը 48

7. Միջազգային համագործակցություն 51

8. Հանձնաժողովի կողմից բյուջետային մուտքերի ապահովում և 2026 թվականի պահպանման ծախսերի նախահաշիվ 56

9. Հանձնաժողովի 2026 թվականի գործունեության ծրագրի հանրային քննարկումը 58

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) պետական քաղաքականություն իրականացնող ինքնավար մարմին է, որն օրենքներով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում կարգավորում է էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառները և ջրային ոլորտը:

Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորող մարմնի դերն ու նշանակությունը նորովի արժևորվեցին 2015 թվականի Սահմանադրության ընդունմամբ, երբ սահմանադրաիրավական կարգավորումների հիմքում դրվեց միջազգային առաջավոր փորձը՝ ուղղված ինստիտուցիոնալ, քաղաքական, իրավական և ֆինանսական առումով անկախ մասնագիտացված կարգավորող մարմին ձևավորելուն: Նշված փոփոխությունների արդյունքում՝ հանձնաժողովին վերապահվեց ինքնավար մարմնի կարգավիճակ, որն ամրագրվեց նաև գործընթացին հաջորդած «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի փոփոխություններով՝ նախատեսելով անկախ և ինքնավար կարգավորող մարմնի գործունեության ապահովման օրենսդրական երաշխիքները:

Հանձնաժողովը, որպես ինքնավար մարմին, կոչված է հավասարակշռելու հանրային ծառայություններից օգտվող սպառողների և ոլորտի տնտեսվարող անձանց շահերը՝ հիմքում դնելով կարգավորող մարմնի անկախությունը և կառույցի նկատմամբ վստահության բարձրացումը:

Ելնելով նշվածից և հաշվի առնելով հանրության համար կարգավորվող ծառայությունների կենսական նշանակությունը՝ հանձնաժողովն իր 2026 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախանշել է այն հայեցակարգային մոտեցումները, որոնք կապահովեն արդյունավետ և հանրօգուտ կարգավորման քաղաքականության իրականացում:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

1) Սակագնային քաղաքականության վարչություն,

2) Իրավաբանական և լիցենզավորման վարչություն,

3) Հեռահաղորդակցության վարչություն,

4) Ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչություն,

5) Գործերի կառավարման վարչություն,

6) Անձնակազմի կառավարման բաժին,

7) Հաշվապահական հաշվառման և սոցիալական ծրագրերի իրականացման բաժին,

8) Միջազգային համագործակցության բաժին:

Հանձնաժողովի բնականոն աշխատանքը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի համաձայն, համակարգում և ապահովում է հանձնաժողովի նախագահը, իսկ հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասությունների շրջանակում, հանձնաժողովի անդամները և գլխավոր քարտուղարը:

1. Էներգետիկայի բնագավառ

1.1. Իրավական բարեփոխումներ

2026 թվականի ընթացքում հանձնաժողովն իր գործունեության ծրագրային ուղղությունների տիրույթում նախանշել է մի շարք իրավական բարեփոխումներ՝ միտված գործող կարգավորումների կատարելագործմանը, իրավական բացերի լրացմանը և կանոնակարգերի լրամշակմանը: Մասնավորապես.

- հանձնաժողովը կշարունակի գործուն մասնակցություն ունենալ էլեկտրաէներգետիկական շուկայի ամբողջական ազատականացմանն ուղղված բարեփոխումների շրջանակներում «Էլեկտրաէներգետիկայի մասին» և «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» նոր օրենքների նախագծերի մշակման աշխատանքներին, որոնց ընդունումը՝ Եվրոպայի միության դիրեկտիվների պահանջների հաշվառմամբ, սկիզբ կհանդիսանա էներգետիկայի բնագավառում բարեփոխումների երկրորդ փուլի համար: Բարեփոխումների այդ փուլի ընթացքում կդիտարկվեն լիարժեք մրցակցային շուկայի ձևավորման հնարավորությունները:

«Էլեկտրաէներգետիկայի մասին» և «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» օրենքների նախագծերով, մասնավորապես, նախատեսվում է հաղորդման և բաշխման ցանցերի օպերատորների գործառութային և շահերի բախման կանխարգելման տարանջատում ու կարգավորում, հանձնաժողովի պարտականությունների հստակեցում, միջպետական առևտրին վերաբերող կարգավորումների հստակեցում, հանրային ծառայության պարտավորություն սահմանելու իրավական հիմքի ամրագրում, հաշվեկշռման ծառայությունը մրցակցային կարգով մատուցելու հնարավարություն,

- սահմանադրահիրավական պահանջին, միջազգային փորձին և Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ/CEPA) շրջանակում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած հանձնառություններին համահունչ, հանձնաժողովի ինստիտուցիոնալ կայացմանն ուղղված հաջորդ շրջափուլին ընդառաջ, հանձնաժողովը կշարունակի «Հանրային ծառայությունները

կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի մշակման աշխատանքները:

Օրինագծերի փաթեթով նախատեսվում է հանձնաժողովի ֆինանսական անկախության ապահովմանն ուղղված՝ վերջինիս ֆինանսավորման բանաձևի վերանայում՝ սահմանելով ֆինանսավորման միջազգային լավագույն փորձին և Եվրոպական միության օրենսդրությամբ սահմանված սկզբունքներին համահունչ պարտադիր վճարների մեխանիզմի ներդրում, ինչպես նաև հանձնաժողովի ֆունկցիոնալ անկախությանն ուղղված՝ հանձնաժողովի կողմից քաղաքացիական ծառայողների մրցույթի անցկացման, հանձնաժողովում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի՝ կրթության, աշխատանքային ստաժի և այլ չափանիշների, ինչպես նաև հանձնաժողովի կողմից իր սահմանած կարգով և դեպքերում վճարովի հիմունքներով փորձագետի ներգրավման հնարավորություն,

- հանձնաժողովը, իր դիրքորոշմանը ներկայացվելու պարագայում, կմասնակցի նաև «Ջերմամատակարարման մասին» և «Գազամատակարարման մասին» նոր օրենքների մշակման աշխատանքներին, որոնք ուղղված կլինեն գործող օրենսդրական կարգավորումների՝ ԵՄ դիրեկտիվների պահանջների հետ ներդաշնակեցմանը: Հանձնաժողովը, բացի հիշյալ օրենքների մշակմանը մասնակցություն ունենալուց, դրանց ընդունումից հետո կնախաձեռնի դրանից բխող՝ իր իրավական ակտերի մշակման կամ գործող ակտերի լրամշակման աշխատանքներ,
- հաշվի առնելով երկրի էլեկտրաէներգետիկական համակարգի առանձնահատկությունները, հենվելով ինչպես միջազգային առաջավոր փորձի, այնպես էլ ներքին շուկայի սպառողների պաշտպանության, արտադրության և

սպառման շուկաներում պատասխանատվության միջոցների ներդրման և այլ հիմնարար սկզբունքների վրա՝ հանձնաժողովի կողմից կշարունակվեն Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելի զարգացմանն ուղղված իրավակարգավորումների (այդ թվում՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկաների առևտրային կանոնների, էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկաների պայմանագրերի նոր օրինակելի ձևերի, էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման և բաշխման ցանցային կանոնների) կատարելագործման աշխատանքները,

- հանձնաժողովը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում և ճյուղային օրենքներում կատարվելիք փոփոխությունների ընդունումից հետո, կնախաձեռնի իր կողմից ընդունվող ենթաօրենսդրական ակտերի իմպլեմենտացման գործընթաց՝ միևնույն ժամանակ շարունակելով կարգավորման մեխանիզմների կատարելագործմանն ուղղված իր իրավական ակտերի լրամշակման աշխատանքները:

1.2. Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում

2022 թվականի փետրվարի 1-ից էլեկտրաէներգետիկական շուկան անցում կատարեց նոր՝ առավել ազատական մոդելի: Ռեֆորմը, հիրավի, կարելի է ամենաարմատականը համարել 2004 թվականից ոլորտում իրականացված բարեփոխումներից ի վեր:

Ռեֆորմի հիմքում ընկած կոնցեպտուալ տարրերն են՝

- էլեկտաէներգետիկական համակարգում մենաշնորհի՝ մրցակցությամբ փոխարինումը (դեմոնոպոլիզացիա).
- ընտրության հնարավորություն սպառողների համար՝ մրցակցային մատակարարների ընտրության (մանրածախ շուկա), կամ որպես որակավորված սպառողներ, անմիջապես մեծածախ շուկային մասնակցության միջոցով.
- մրցակցային մասնակիցների մուտք էլեկտրաէներգետիկական շուկա.
- առևտրի թվայնացում և ամսական առևտրի փոխարինում իրական ժամանակում ընթացող ժամային առևտրով՝ շուկայի էլեկտրոնային ծրագրի միջոցով.
- ներդրումների խթանում՝ առավելապես արևային էներգետիկայի բնագավառում.

- հասցեական պատասխանատվություն և պլանավորման լավարկում.
- միջսահմանային առևտրի խթանում՝ էլեկտրական էներգիայի ներկրման և արտահանման պարզեցված կարգավորումների ներդրմամբ.
- մեծածախ առևտրի իրականացում շուկայի 3 հատվածում՝ ուղիղ պայմանագրերի շուկա, օր առաջ շուկա, հաշվեկշռման շուկա.
- անցումային կարգավորումներ՝ ռեֆորմի հարթ և անցնցում իրականացման նպատակով:

Շուկայի մեկնարկից ավելի քան երեք տարի անց (2025 թվականի հունվար-օգոստոս ամիսների արդյունքներով) էլեկտաէներգետիկական համակարգում մենաշնորհի՝ մրցակցությամբ փոխարինման (դեմոնոպոլիզացիա) արդյունքում շուկայի ազատականացված հատվածում ձեռք բերվող էլեկտրական էներգիայի մասնաբաժինը կազմում է ներքին սպառման շուրջ 32%-ը, 2022 թվականի 5,3%-ի համեմատությամբ. 2025 թվականի արդյունքներով կանխատեսվում է այդ ցուցանիշը հասցնել շուրջ 36%-ի, իսկ 2026 թվականի արդյունքներով՝ 41,4%-ի:



2022 թվականի փետրվարի 1-ից էլեկտրաէներգետիկական համակարգի բոլոր սպառողներին տրված է ընտրության իրավունք՝ ինքնուրույն որոշելու սեփական մատակարարին. այլ կերպ ասած՝ սպառողն ինքն է որոշում շարունակել իրեն անհրաժեշտ էլեկտրական էներգիան գնել պատմականորեն մենաշնորհ ունեցող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունից՝ հանձնաժողովի կողմից սահմանված սակագներով, թե ընտրել մրցակցային այլ

մատակարարի և վճարել չկարգավորվող պայմանագրային գնով: Ընդ որում, մրցակցային մատակարարի ընտրության դեպքում ևս «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է տեղափոխել մրցակցային եղանակով գնված էլեկտրական էներգիան, վճարվելով միայն հանձնաժողովի սահմանած էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության սակագներով: Կոմերցիոն սպառողներին իրավունք է տրված անմիջականորեն մասնակցելու մեծածախ շուկային, ինչն իր հերթին նշանակում է էլեկտրական էներգիայի գնում անմիջապես արտադրողից կամ մեծածախ առևտուր իրականացնողից (թրեյդերից):

Մատակարարների և թրեյդերների նոր ինստիտուտի ներդրման արդյունքում արդեն իսկ ոլոտում առկա են հանձնաժողովի կողմից լիցենզավորված 28 մատակարարներ (որոնցից 13-ը ակտիվ գործունեություն են իրականացնում շուկայում) և 8 թրեյդերներ: 2026 թվականին շուկայում ներկայումս գործող 173 մրցակցային էլեկտրակայաններին (ներառյալ միկրոէներգաարտադրողներ) կավելանան նաև «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված էլեկտրական էներգիայի գնման երաշխիքային ժամկետը լրացած ևս 11 փոքր հիդրոէլեկտրակայաններ: Միաժամանակ, 2025 թվականի մայիսի 14-ին ընդունված «Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-111-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն՝ էլեկտրական էներգիայի գնման երաշխիքից օգտվող լիցենզավորված անձինք, բացառությամբ խմելու կամ ոռոգման ջրատարի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայան շահագործող անձանց՝ այդ կայանի մասով, իրավունք ունեն հանձնաժողովի կողմից սահմանված կարգով 2026 թվականի փետրվարի 1-ից սկսած մինչև 2028 թվականի փետրվարի 1-ը հրաժարվելու էլեկտրական էներգիայի գնման երաշխիքից, որից հետագայում այլևս օգտվել չեն կարող: Այս կարգավորման ներդրման արդյունքում ազատական շուկայում գործող մրցակցային կայանների թիվը նույնպես կաճի:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 11-ին առաջին ընթերցմամբ ընդունված «Էներգետիկայի մասին» օրենքում լրացումների և փոփոխությունների արդյունքում 150 կՎտ-ը գերազանցող հզորությամբ ինքնավար էներգաարտադրողների համար

հնարավորություն է ստեղծվել նույն կարգավիճակն ունեցող մյուս անձանց հետ հավասար պայմաններով մասնակցելու էլեկտրաէներգետիկական մրցակցային շուկային՝ այդ կերպ նաև խթանելով էլետրաէնեգետիկական շուկայում մրցակցությունը և ընդլայնելով դրա մրցակցային հատվածում առևտրի մասնակիցների շրջանակը.

Հանձնաժողովի ակտիվ ներգործությամբ նախատեսվում է ապահովել նաև շուկայի նոր սպառողների թվաքանակի աճ:

2025 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ շուկայի ազատականացված հատվածում գործում են ավելի քան 521 սպառողներ, որոնցից 45-ը որակավորված սպառողներ են և ինքնուրույն են մասնակցում առևտրին: Ընդ որում, 2025 թվականի փետրվարի 1-ից ազատական շուկա մուտք գործելու պարտավորություն ունեին 158 սպառող, որոնցից 95-ը 2025 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ արդեն շուկայում են՝ տարեկան 174,7 մլն կՎտժ սպառման ծավալով, իսկ 2025 թվականի օգոստոսի 1-ից ազատական շուկա մուտք գործելու պարտավորություն ունեին 151 սպառող, որոնցից 105-ը 2025 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ արդեն շուկայում են՝ տարեկան 244,5 մլն կՎտժ սպառման ծավալով: 2026 թվականի փետրվարի 1-ի դրությամբ նախատեսվում է շուրջ 212 նոր սպառողների մուտք ազատական շուկա՝ տարեկան ընդամենը շուրջ 360 մլն կՎտժ սպառման ծավալով:

Բացի այդ, Օրենքի համաձայն՝ այն սպառողները, որոնք նախորդ օրացուցային տարվա ընթացքում իրենց 6 (10) կՎ ու բարձր լարման՝ մեկ միլիոն կՎտժ սպառումը գերազանցող բոլոր հաշվառման կետերում միասին ունեցել են 12 միլիոն կՎտժ և ավելի սպառում, պարտավոր են մինչև տվյալ տարվա փետրվարի 1-ը, Օրենքի և շուկայի կանոնների համաձայն, տվյալ հաշվառման կետերի մասով ստանալ որակավորված սպառողի կարգավիճակ: 2024 թվականի տարեկան սպառման արդյունքներով առկա են Օրենքի ուժով որակավորված սպառողի կարգավիճակ ստանալու պարտավորություն ունեցող 23 սպառողներ, ընդամենը՝ 1557 մլն կՎտժ տարեկան սպառման ծավալով, որոնցից 7-ն արդեն իսկ շուկայում գործող որակավորված սպառողներ էին, մյուս 16-ը՝ մատակարարների հաշվեկշռման խմբում գործող սպառողներ էին, որոնք 2025 թվականի օգոստոսի 1-ից շուկայում գործում են որպես որակավորված սպառող:


Էլեկտրաէներգետիկական շուկայի մրցակցային հատվածի սպառողների նախատեսված պարտադիր մուտքը (մլն կՎտժ)
2,500.00
2,000.00
1,500.00
1,000.00
500.00
0.00
1,374.71
2119.85
2479.85
2024 թվական
2025 թվական
2026 թվական


Էլեկտրաէներգետիկական շուկայի մրցակցային հատվածի փաստացի սպառում
2000
1800
1600
1400
1200
1000
800
600
400
200
0
1895.91
1531.21
2024 թվական
2025 թվական (սեպտեմբերի 1-ի դրությամբ)



Մեծածախ շուկայում առևտուրը ենթադրում է օպտիմալ պլանավորում և հասցեական պատասխանատվություն՝ ինչպես սպառման, այնպես էլ արտադրության հատվածում: Շուկայի նոր մոդելի շրջանակում ամսական առևտուրը փոխարինվել է ժամային առևտրով, ինչի արդյունքում՝ շուկայում գործող յուրաքանչյուր առևտրի մասնակից պատասխանատվություն է կրում տվյալ ժամի համար իր գնած կամ վաճառած հոսանքի ծավալից շեղվելու համար: Առևտուրն ամբողջությամբ թվայնացված է և իրականացվում է միասնական էլեկտրոնային հարթակի՝ շուկայի կառավարման ծրագրի միջոցով:

Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում առևտուրն իրականացվում է հետևյալ սեգմենտներում՝

- ուղիղ պայմանագրերի շուկայում, որն իր հերթին բաղկացած է երկարաժամկետ (ԵՐՊ), կարգավորվող (ԿՈՒՊ) և չկարգավորվող (ՉՈՒՊ) ուղիղ պայմանագրերի բաղադրիչներից: Ընդ որում, կարգավորվող ուղիղ պայմանագրերի բաղադրիչը գործարկվել է 2023 թվականի փետրվարի 1-ից:

- օր առաջ շուկայում (ՕԱՇ),
- հաշվեկշռման շուկայում՝ սահմանված մեխանիզմով (հաշվեկշռման ծառայություն մատուցողի՝ ՀԾՄ-ի կողմից):

Նախատեսվում է օր առաջ շուկայում սակագնային կարգավորման ենթակա կայանների կողմից ներկայացվող վաճառքի հայտերի գնի սահմանման մեխանիզմի վերանայում՝ սահմանելով, որ տվյալ կայանների կողմից օր առաջ շուկա ներկայացվող վաճառքի հայտերի գները չեն կարող ցածր լինել հաշվեկշռման ծառայություն մատուցող արտադրողի նվազագույն գնից:

Վերանայվել են նաև սակագնային կարգավորման ենթակա կայանների՝ հաշվեկշռման պատասխանատվության ինքնուրույն կարգավիճակ ունենալու և դրա արդյունքում օր առաջ շուկայում էլեկտրական էներգիայի առևտուր իրականացնելու ժամկետները՝ ոռոգելի ջրային ռեսուրսի կիրառմամբ ԿԷԱ կայանի դեպքում՝ սահմանելով նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը, իսկ ատոմային ԿԷԱ կայանի դեպքում՝ ամբողջական կանգառով պլանային նորոգումից դուրս ամբողջ ժամանակահատվածը:

Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի գործարկումից ի վեր՝ 2025 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ կնքվել են 80125 պայմանագրեր, որոնցից 19-ը՝ երկարաժամկետ պայմանագրերի բաղադրիչում, 1100-ը՝ կարգավորվող ուղիղ պայմանագրերի բաղադրիչում, 633-ը՝ տեղական և 29-ը՝ միջպետական չկարգավորվող ուղիղ պայմանագրերի բաղադրիչում, 78344-ը՝ օր առաջ շուկայում:

Նախատեսվում է վերանայել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող (պետական մասնակցությամբ)՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրի մասնակիցների կողմից բանկային երաշխիքի ներկայացման կարգավորումը՝ նախատեսելով, որ վերջիններս շուկայի օպերատորին կարող են ներկայացնել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի հետ կնքված՝ պետական բյուջեից սուբսիդիայի տրամադրման պայմանագիրը և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից տրված պետական երաշխիքը:

Շուկայի ազատականացումը և էլեկտրական էներգիայի ներկրման ու արտահանման պարզեցված կարգավորումների ներդրումը կարևոր ազդակ են միջսահմանային առևտրի խթանման համար: Շուկայի մեկնարկից ի վեր, շնորհիվ

Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի ներկրման ու արտահանման գործունեությունների իրականացման վերաբերյալ կարգավորումների լավարկման, Վրաստանից ներկրվել է շուրջ 332,5 մլն կՎտժ, իսկ արտահանվել է 648,5 մլն կՎտժ էլեկտրական էներգիա, որի արտահանման տարեկան միջին ցուցանիշը շուրջ 6 անգամ գերազանցում է շուկայի մեկնարկին նախորդած 10 տարիների միջին տարեկան ցուցանիշը (2012-2021թթ. արտահանման միջին տարեկան ցուցանիշը կազմում է 26,2 մլն կՎտժ): Միայն 2025 թվականի մայիս-հուլիս ամիսների համար շուկայի ազատականացված հատվածի մատակարարի կողմից կնքվել են Վրաստանից էլեկտրական էներգիայի ներկրման պայմանագրեր՝ 83.034 մլն կՎտժ ծավալով: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ միջսահմանային առևտրի ներուժը հնարավոր կլինի ամբողջությամբ օգտագործել Հայաստան-Վրաստան և դեպի Իրան միջպետական նոր բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի գործարկման արդյունքում, ինչպես նաև ԵԱՏՄ-ի ընդհանուր էներգետիկ շուկայի գործարկումից հետո:

Էլետրաէներգետիկական շուկայի ազատականացման համատեքստում հանձնաժողովին վերապահված՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մոնիթորինգի գործառույթի արդյունավետ կիրառումից է մեծապես կախված շուկայի բնականոն աշխատանքը, վերջնարդյունքում՝ նաև ազատականացման ռեֆորմի աստիճանական և անցնցում իրագործման հաջողումը: Հանձնաժողովին վերապահված հիշյալ գործառույթի շրջանակում 2026 թվականին նախատեսվում է մոնիթորինգի գործիքների առավել ընդլայնված և արդյունավետ կիրառում: Կշարունակվի հանձնաժողովի աշխատակազմի կողմից դիտարկվել շուկայի գործունեությունը և դրա շրջանակում կնքվող գործարքների՝ շուկայի կանոններին համապատասխանությունը, ինչը հնարավորություն կտա հնարավորինս շուտ բացահայտել շուկայի մասնակիցների կողմից թույլ տված բացթողումները, կանխել վերջիններիս կողմից թույլ տրված հակամրցակցային գործելակերպը, տալ հասցեական գնահատականներ և առաջադրել օպերատիվ կերպով լուծումներ առևտրի ընթացքում ծագող օբյեկտիվ խնդիրներին, որոնց արդյունքում կշարունակվեն շուկայի ներկայիս մոդելի հիմքում ընկած հիմնական կարգավորող իրավական ակտերի (էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկայի առևտրային կանոններ, օֆերտայի պայմանագրի

օրինակելի ձև, հաղորդման և բաշխման ցանցային կանոններ) լավարկման աշխատանքները:

Նշված գործառույթի դժվարությունը պայմանավորված է ոչ միայն կատարման ենթակա աշխատանքին բնորոշ մեծ ծավալներով, այլև խիստ մասնագիտական գիտելիքներ պահանջող մասնագետների ներգրավման և վերջիններիս հետևողական ու մշտական վերապատրաստման անհրաժեշտությամբ: Հաշվի առնելով շուկայի առջև ծառացած մարտահրավերներին ու խնդիրներին ժամանակին, պատշաճ և համակողմանի լուծումներ տալու անհրաժեշտությունը, ինչպես նաև շուկայի մրցակցային հատվածի արդյունքային ցուցանիշների և առևտրի ծավալների դինամիկ աճով պայմանավորված՝ 2026 թվականին ևս կշարունակվեն մասնագետների ներգրավման և վերջիններիս վերապատրաստմանն ուղղված աշխատանքները:

Շուկայի ազատականացման բարեփոխումը հնարավորինս հարթ և անցնցում իրականացնելու նպատակով, ինչպես նաև, ելնելով էլեկտրաէներգետիկական համակարգի բարեփոխումների հիմքում դրված՝ ներքին շուկայի սպառողների շահերի պաշտպանության հիմնարար սկզբունքից՝ շուկայի գործարկման առաջին տարվա համար հանձնաժողովը սահմանել է անցումային կարգավորումներ: Նշված կարգավորումները շուկայի մասնակիցներին թույլ են տալիս իրենց վարքագիծը համապատասխանեցնել շուկայական նոր մոդելին աստիճանաբար՝ մի կողմից օգտվելով շուկայի ընձեռած հնարավորություններից, մյուս կողմից՝ զերծ մնալ կտրուկ ֆինանսական տատանումներից:

Միաժամանակ, հանձնաժողովի կողմից սպառողների համար սահմանվել են շուկա պարտադիր մուտքի ժամկետներ՝ պայմանավորված վերջիններիս լարման մակարդակով և տարեկան սպառմամբ: Հիշյալ կարգավորումների համաձայն՝ 2025 թվականի փետրվարի 1-ից շուկա մուտքի պարտավորություն է սահմանվել այն սպառողների համար, որոնք իրենց որևէ 6 (10) կՎ լարման առևտրային հաշվառքի սարքով ունեցել են 1 մլն կՎտժ և ավելի սպառում (ընդամենը՝ 275.3 մլն կՎտժ սպառման ծավալով) և 2025 թվականի օգոստոսի 1-ից շուկա մուտքի պարտավորություն է սահմանվել այն սպառողների համար, որոնք իրենց 6 (10) կՎ լարման բոլոր՝ 12 հազար կՎտժ սպառումը գերազանցող առևտրային հաշվառքի սարքերով ունեցել են 1 մլն կՎտժ և ավելի սպառում (ընդամենը՝ 337.7 մլն կՎտժ

սպառման ծավալով): 2026 թվականի փետրվարի 1-ից նման պարտավորություն ունեն նախորդ օրացուցային տարում անկախ լարման մակարդակից իրենց բոլոր՝ 12 հազար կՎտժ սպառումը գերազանցող առևտրային հաշվառքի սարքերով 1 մլն կՎտժ և ավելի սպառում ունեցած սպառողները (ընդամենը՝ 360 մլն կՎտժ սպառման ծավալով):

1.3. Սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

Մասնավորապես, էներգետիկայի բնագավառում ընկերությունների գործունեության առանձնահատկություններից ելնելով, հանձնաժողովի կողմից կիրառվում են միջազգային պրակտիկայում ընդունված կարգավորման մեխանիզմները՝ ինչպես ծախսերի (cost based) որոշման վրա հիմնված, այնպես էլ արդեն իսկ շուկայական (market based) մեխանիզմները: Ընդ որում, «cost based» մեխանիզմի մասով կիրառվում են շահույթի դրույքի սահմանային մակարդակի (rate of return regulation), սահմանային հասույթի մակարդակի (revenue cap regulation) և սահմանային սակագնի մակարդակի (price cup regulation) մեթոդները: Կարգավորման «market based» մեխանիզմի մասով, էլեկտրաէներգետիկական ազատական շուկայի գործունեությանը զուգընթաց՝ կավելանա նշված սկզբունքով գործող շուկայի մասնակիցների թիվը, այդ թվում՝ 2026 թվականին «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված էլեկտրական էներգիայի գնման երաշխիքային ժամկետը լրացած ևս 11 փոքր հիդրոէլեկտրակայաններ կանցնեն մրցակցային դաշտ, իսկ գնման երաշխիքից հրաժարված թվով 21 արևային էլեկտրակայաններ՝ շահագործման փուլ՝ որպես մրցակցային գներով գործող արտադրողներ:



Կարգավորման «cost based» մեխանիզմների կիրառման ժամանակ որոշ ընկերությունների մոտ արդեն իսկ կիրառվում է խթանիչ կարգավորման գործիքակազմ (incentive-based mechanisms)՝ ավելի բարձր արդյունավետության մակարդակ ապահովելու նպատակով: Այս մոտեցումը խթան է, որպեսզի ընկերությունները յուրաքանչյուր կարգավորման ժամանակահատվածի համար, հնարավորինս արագ, հասնեն ծախսերի օպտիմալացման և կորուստների կրճատման՝ այդ ընթացքում ստանալով լրացուցիչ օգուտներ, իսկ կարգավորման ժամանակահատվածի ավարտին հաջորդող տարվա սակագներում արդեն իսկ հաշվի կառնվեն բարելավված ցուցանիշները՝ դրական ազդեցություն ունենալով սպառողների սակագների վրա: Խթանիչ սակագնային քաղաքականություն կիրառվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության և գազամատակարարման համակարգի ընկերությունների նկատմամբ:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության մոտ մեկնարկել է խթանիչ սակագնային քաղաքականության կարգավորման 3-րդ ժամանակահատվածը, որի ավարտին նախատեսվում է ունենալ ստորև նշված գծապատկերում արտացոլված՝ հիմնական ցուցանիշների մասով կրճատում:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ծախսերի օպտիմալացումը և կորուստների կրճատումը
12.000
10.000
8.000
6.000
4.000
2.000
0.000
11.03
7.5
7
6.4
7.806
6.706
6.426
6.146
4.270
3.07831
3.137
3.76959
3.49
2.823
3.09756
2.633
Ելակետը 2016թ
Ցուցանիշը 2021թ
Ցուցանիշը 2025թ
Թիրախը 2028թ
Աշխատակիցների թվաքանակ(հազ մարդ, առանց սպառողների թվաքանակի՝ նախատեսվածից ավելի աճով պայմանավորված ճշգրտումները հաշվի առնելու)
Նորոգման նյութական ծախսեր (մլրդ դրամ, 2016-2025թթ. ցուցանիշը սակագնի հաշվարկներում ներառված ցուցանիշն է՝ սղաճը հաշվի առնելով, իսկ 2028թ. թիրախային ցուցանիշն՝ առանց սղաճը և սպառողների թվաքանակի՝ նախատեսվածից ավելի աճով պայմանավորված ճշգրտումները հաշվի առն
Այլ ծախսեր (մլրդ դրամ, առանց օրենսդրության փոփոխության ազդեցությունը հաշվի առնելու)
Էլեկտրական էներգիայի կորուստները բաշխիչ ցանցերում (տոկոս)

Գազամատակարարման համակարգում մեկնարկել է խթանիչ սակագնային քաղաքականության կարգավորման 2-րդ ժամանակահատվածը, որի ավարտին ևս սակագների հաշվարկներում նախատեսվում է ունենալ ստորև նշված գծապատկերում արտացոլված՝ հիմնական ցուցանիշների մասով կրճատում:



Կշարունակվեն էներգետիկայի բնագավառում էներգետիկ հաշվեկշիռների, կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ու պարտավորությունների, իրականացված ներդրումների և սակագների վրա ազդող մի շարք այլ գործոնների վերլուծության և, ըստ անհրաժեշտության, սակագների վերանայման աշխատանքները:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության դրամի փոխարժեքի տատանումները և սղաճի փոփոխությունները՝ կճշգրտվեն «Էներգետիկայի մասին» օրենքով նախատեսված՝ գնման երաշխիք ունեցող փոքր հիդրոէլեկտրակայաններից և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները, որոնք ուժի մեջ կմտնեն 2026 թվականի հուլիսի 1-ից: Այս գործընթացը կրում է պարբերական բնույթ և իրականացվում է յուրաքանչյուր տարի:

2026 թվականին կուսումնասիրվեն և կհաստատվեն երկդրույք սակագնային համակարգում գործող՝ էլեկտրական էներգիա արտադրող խոշոր կայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

2026 թվականին կսահմանվեն նաև «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն առաքվող և «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերությունից ձեռք բերվող էլեկտրական էներգիայի ամսական չափաքանակները:

1.4. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում և գնումների մոնիթորինգ

Հանձնաժողովի գործառույթներից իր կարևորությամբ առանձնանում է էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, այդ թվում՝ ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու հրապարակումը: Նշված աշխատանքները կարևորվում են սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի որոշման, ներդրումների արդյունավետության գնահատման, այդ համատեքստում

անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և վերհանման առումով՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագներում դրանք չներառելու սկզբունքից ելնելով: Այդ նպատակով հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում և համաձայնություն է տալիս էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերին, ինչպես նաև ամփոփում է նույն ընկերությունների նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները և հրապարակում համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

Հանձնաժողովի հետ ներկայումս համաձայնեցված ներդրումային ծրագրերի շրջանակում 2026 թվականին Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում ներդրումներ կիրականացնեն «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությունները՝ ընդհանուր՝ շուրջ 84 միլիարդ դրամ ծավալով:



Մասնավորապես, «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների ներդրումային ծրագրերն ուղղված են սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, նոր սպառողների սպառման համակարգերի միացմանը, առևտրային հաշվառման համակարգերի կատարելագործմանը, հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրմանը: «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը միտված է հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրությանը և շինարարական աշխատանքների ծավալի գնահատմանը, շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավմանը: «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրն ուղղված է ընկերության շահագործման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի և անվտանգության համակարգերի ձեռքբերմանը: «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրն ուղղված է «Սևան-Հրազդան» կասկադի վերազինմանը (այդ թվում՝ հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական, օժանդակ, էլեկտրատեխնիկական, ռելեական պաշտպանության սարքավորումների և հիդրոտեխնիկական կառուցվածքների վերազինում)՝ հետագա անվտանգ, արդյունավետ և հուսալի շահագործման նպատակով, իսկ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը պայմանավորված է ISO ստանդարտների և դրանց աուդիտի իրականացման ներդրմամբ:

Ընդ որում, բացի նշված՝ հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրերից, Հայաստանի Հանրապետության կառավարությունից կամ Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերի շրջանակում «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը կշարունակի իրականացնել նաև 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագիրը, իսկ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը՝ էլեկտրահաղորդման ցանցի կառուցմանն ու վերակառուցմանն ուղղված ծրագրերը:

Նշված ծրագրերի շրջանակում 2026 թվականին նախատեսված է շուրջ 53 միլիարդ դրամի վճարումներ:

Հանձնաժողովն առանձնակի ուշադրություն է դարձնում էլեկտրական էներգիայի և բնական գազի բաշխման գործունեություն իրականացնող ընկերությունների ներդրումային ծրագրերի կառուցվածքին՝ ներդրումներն առաջնահերթ առավել վատթար վիճակում գտնվող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանն ուղղելու նպատակով: Անհատապես ուսումնասիրվում է սպառողների կողմից սպասարկման որակի ցուցանիշներին (ընդհատումներ, էլեկտրական էներգիայի լարման թույլատրելի սահմաններից շեղումներ) վերաբերող յուրաքանչյուր բողոք, և բարձրացված հարցի լուծման ուղղությամբ հասցեական աշխատանքները ներառվում են ընկերությունների ներդրումային ծրագրերում:

Ներդրումային գործունեության վերլուծության արդյունավետության բարձրացման, ներդրումների հավաստիության և հիմնավորվածության ստուգման առավել արդյունավետ մեթոդներ և գործիքներ օգտագործելու նպատակով հանձնաժողովը 2026 թվականին կնախաձեռնի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ու «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների ներդրումային գործունեության աուդիտի իրականացում, որը նպատակ ունի բարձրացնել հանրության և շահագրգիռ կողմերի մոտ ընկերությունների ներդրումային գործունեության նկատմամբ օբյեկտիվ, հիմնավոր գնահատականի ձևավորման նկատմամբ վստահությունը և սակագների հաշվարկներում ներառվող ներդրումային ծախսերի հիմնավորվածությունը:

2026 թվականին հանձնաժողովը կամփոփի հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում գործունություն իրականացնող ընկերությունների 2025 թվականի ներդրումային գործունեության արդյունքները, ինչպես նաև կքննարկի «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ», «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերը:

Հանձնաժողովն, ինչպես յուրաքանչյուր տարի, 2026 թվականին ևս՝ հետևողական է լինելու իր կարգավորման դաշտում գործող հանրային կազմակերպությունների կողմից իրականացվող գնումների արդյունավետության ու թափանցիկության ապահովման

հարցում՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագների վրա ազդեցության առումով: Վերջիններիս կողմից գնումների գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով համապատասխան տեղեկատվությունը հրապարակվում է ինչպես «Գնումների մասին» օրենքով նախատեսված www.procurement.am ինտերնետային կայքում, այնպես և ընկերությունների պաշտոնական ինտերնետային կայքերում: Ընդ որում, արդեն իսկ սահմանվել են համապատասխան կարգավորումներ, որոնց համաձայն՝ 2026 թվականի մարտի 1-ից սկսած հանրային կազմակերպությունների մրցութային գործընթացները կկազմակերպվեն բացառապես էլեկտրոնային եղանակով՝ համաշխարհային ճանաչում ունեցող հարթակների, կամ պետական գնումների համար օգտագործվող armeps հարթակի միջոցով:

Գնումների կարգերի նկատմամբ պահանջների սահմանման, ինչպես նաև հետագա մոնիթորինգի ենթակա հանրային կազմակերպությունների ցանկում ներառված են հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում գործունեություն իրականացնող՝ մասնավոր բաժնեմաս ունեցող այն ընկերությունները, որոնց կողմից իրականացվող գնումների արդյունավետությունը կարող է ազդեցություն ունենալ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագների վրա, ինչպես, օրինակ, «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունները, «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ինչպես նաև «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությունը (հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով կատարվող գնումների մասով):

Նշված ցանկում չեն ներառվել 50 տոկոսից ավելի պետական բաժնեմաս ունեցող հանրային կազմակերպությունները, քանի որ նրանց կողմից իրականացվող գնումների գործընթացը կարգավորվում է «Գնումների մասին» օրենքով:

2026 թվականի ընթացքում հանձնաժողովը կշարունակի իրականացնել հանրային կազմակերպությունների գնումների գործընթացի կազմակերպման մոնիթորինգ՝ ռիսկային գործարքների վերհանման, ընթացակարգերի ընտրության հիմնավորվածության գնահատման, գնման ընթացակարգերի ընդհանուր ծավալում

մրցակցային ընթացակարգերի կշռի գնահատման, հրապարակված գնումների պլանով նախատեսված և փաստացի իրականացված գնումների համապատասխանության ստուգման նպատակով:

Նույն ժամանակահատվածում կիրականացվի նաև հանրային կազմակերպությունների գնումների առանձին գործարքների մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից գնման գործընթացի պլանավորման կամ նախապատրաստման մոնիթորինգը, գնման գործընթացի կազմակերպման մոնիթորինգը, այդ թվում՝ հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի, ինչպես նաև պայմանագրի կնքման և կատարման մոնիթորինգը:

Հանրային կազմակերպությունների գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (www.psrc.am):

Հանձնաժողովը, 2026 թվականին համագործակցելով բոլոր շահագրգիռ կողմերի և միջազգային կազմակերպությունների հետ, կշարունակի աշխատանքները հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց կողմից փաստացի կատարված գնումների արդյունավետության ու թափանցիկության բարձրացման ուղղությամբ՝ կիրառելով նաև արդեն իսկ ներդրված մոնիթորինգի մեխանիզմները:

1.5. Վերականգնվող էներգետիկա

Հայաստանի Հանրապետության էներգետիկ անկախության բարձրացմանն ուղղված՝ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ նոր հզորությունների ստեղծումը և դրան ուղղված համապատասխան իրավական և տնտեսական մեխանիզմների ներդրումը մշտապես գտնվում են կառավարության և հանձնաժողովի գործունեության առանցքում: Այդ առումով, հատկանշական է արևային ֆոտովոլտային կայանների լիցենզավորման գործընթացը՝ արևային էլեկտրակայաններ կառուցելու և շահագործելու համար:

Ներկայումս ընթացքի մեջ է նաև լրացուցիչ նախատեսված՝ 15 ՄՎտ գումարային հզորության սահմանաչափի շրջանակում համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին մինչև 1 ՄՎտ հզորությամբ արևային էլեկտրակայանների կառուցման և շահագործման նպատակով լիցենզիաների տրամադրման գործընթացը, որի շրջանակում տրամադրվել է 3 լիցենզիա՝ ընդհանուր 1251 կՎտ հզորությամբ (600 կՎտ հզորությամբ մեկ կայան արդեն իսկ անցել է շահագործման փուլ): Բացի այդ, առանց էլեկտրական էներգիայի գնման երաշխիքի, տրամադրվել է արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության 55 լիցենզիա՝ ընդհանուր շուրջ 328 ՄՎտ հզորությամբ (նշված լիցենզիաների շրջանակում շուրջ 130 ՄՎտ հզորությամբ 27 կայան արդեն իսկ անցել է շահագործման փուլ), ինչպես նաև բացառապես սեփական կարիքների համար արևային էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության 19 լիցենզիա՝ ընդհանուր շուրջ 28 ՄՎտ հզորությամբ (նշված լիցենզիաների շրջանակում շուրջ 3 ՄՎտ հզորությամբ 5 կայանների կառուցումն ավարտվել է):

Հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 18-ի №227-Ա որոշմամբ «ԷՅՉ ԷՆԵՐՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի վարչական տարածքում 50,1 ՄՎտ էլեկտրական հզորությամբ և 29,2 ՄՎտ ջերմային հզորությամբ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա: Տվյալ կայանի արտադրության փուլ անցնելու դեպքում, չնայած վերջինս հանդիսանալու է սահմանափակման ենթակա արտադրող, այնուամենայնիվ, հաշվի առնելով վերջինիս տեխնիկատնտեսական ու տեխնոլոգիական առավելությունները՝ կայանի գործունեությունը կարող է ուղղվել էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիությունն ու անվտանգությունը վտանգող ռեժիմային խնդիրների լուծմանը:

Էլեկտրական էներգիայի գնման երաշխիք չունեցող՝ մրցակցային արևային կայանների մեծ տեմպերով զարգացումը՝ առանց նշված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի պահուստավորման հնարավորության և աշխատանքի ռեժիմների կարգավարման, խնդիրներ է ստեղծում էլեկտրաէներգետիկական

համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների ապահովման տեսանկյունից: Ելնելով նշվածից՝ հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 19-ի N191-Ն և N192-Ն որոշումներով Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի ցանցային կանոնների փոփոխություններով նախատեսված կարգավորումների համաձայն, 2024 թվականի հուլիսի 1-ից հետո կառուցվող՝ գնման երաշխիք չունեցող կայանների համար նախատեսվել է, որ էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների խախտման կամ դրա հնարավոր վտանգի դեպքում էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը իրավունք կունենա նշված կայաններից էլեկտրական ցանց էլեկտրական էներգիայի առաքումը դադարեցնելու կամ սահմանափակելու՝ առավելագույնը 1080 ժամով: Էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմային խնդիրներով պայմանավորված՝ նշված կարգավորումները լրամշակվել են հանձնաժողովի 2025 թվականի ապրիլի 9-ի N136-Ն որոշմամբ, որով դադարեցման կամ սահմանափակման ժամերի թիվը հասցվել է 2200-ի:

Արդյունաբերական մասշտաբի արևային էլեկտրակայանների մասով նույնպես իրականացվում են համապատասխան ծրագրեր: Մասնավորապես, 2025 թվականի մայիսի 15-ից շահագործման փուլ է անցել առաջին խոշոր արդյունաբերական արևային էլեկտրակայանը՝ «Մասրիկ-1»-ը, 55 ՄՎտ հզորությամբ, որը տեղակայված է Գեղարքունիքի մարզում: Կայանի նախագծային, ապա փաստացի տեղակայված հզորությունը կազմել է 55 Մվտ: «Մասրիկ-1»-ը ոչ միայն կարևոր ներդրում է էներգետիկ ոլորտում, այլև Հայաստանի՝ վերականգնվող և մաքուր էներգիայի աղբյուրների զարգացման առանցքային բաղադրիչն է:

2026 թվականին հանձնաժողովը մասնակցություն կունենա Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի №48-Լ որոշման 2-րդ հավելվածով հաստատված՝ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրով (մինչև 2040 թվականը) սահմանված՝ արևային էներգետիկայի զարգացմանն ուղղված միջոցառումներին:

Վերականգնվող էներգետիկայի զարգացման և էներգետիկ անկախության ապահովման առումով տարեցտարի առավել նշանակալի է դառնում վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության միջև իրականացվող էլեկտրական էներգիայի փոխհոսքերի գործընթացը: Նշված գործընթացն իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող սպառողներին հնարավորություն է տալիս առանց գործունեության լիցենզիա ստանալու՝ արտադրելու և սպառելու էլեկտրական էներգիա, միաժամանակ, ավելցուկն առաքելով բաշխման ցանց՝ հաշվարկային տարվա ընթացքում այն սպառելու կամ, հակառակ պարագայում, համապատասխան փոխհատուցում ստանալու հնարավորությամբ: Ինքնավար էներգաարտադրությունը թույլ է տալիս էլեկտրական էներգիայի սեփական արտադրության միջոցով բարելավել և համահարթեցնել սպառման ռեժիմներն ինչպես կենցաղային մակարդակում՝ նվազեցնելով ինքնավար էներգաարտադրող հանդիսացող բնակիչ-սպառողների էլեկտրական էներգիայի գծով ծախսերը, այնպես էլ գործարար միջավայրում՝ նպաստելով ինքնավար էներգաարտադրող հանդիսացող կազմակերպությունների ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի նվազեցմանը:

2025 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ էլեկտրաէներգետիկական համակարգին են միացել ավելի քան 43670 ինքնավար էներգաարտադրողներ, որոնց համակարգերի ընդհանուր հզորությունը կազմել է մոտ 560 ՄՎտ:

2022 թվականի մայիսի 1-ից ուժի մեջ մտած «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-261-Ն օրենքի գործողությամբ մեկնարկել է ինքնավար էներգաարտադրության բարեփոխումների նոր փուլ, որով ինքնավար էներգաարտադրողներին հնարավորություն է տրվել ինքնավար էներգաարտադրության շրջանակում ձևավորել խմբեր և այդ խմբերում ընդգրկել առանձին ինքնավար էներգաարտադրողների և սպառողների, ինչպես նաև էլեկտրական էներգիան արտադրել էլեկտրաէներգետիկական համակարգի մեկ կամ ավելի կետերում և սպառել տարբեր կետերում: Նշված հնարավորություններն իրենց բնույթով որպես հեռանկարային և ինքնավար էներգաարտադրության զարգացման տեմպերի հսկայական ներուժ պարունակող՝ հնարավորություն են տալիս տարբեր տնտեսական հետաքրքրություն և ռեսուրսներ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց

միավորվել փոխադարձ տնտեսական շահ պարունակող տարատեսակ նախագծերի շուրջ՝ միաժամանակ ինքնավար խմբի ներսում ունենալով չկարգավորվող հարաբերություններ: 2025 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ ձևավորվել են տարբեր ինքնավար էներգաարտադրողներից և սպառողներից կազմված շուրջ 750 ինքնավար խմբեր, իսկ մոտ 800 ինքնավար էներգաարտադրողներ էլ օգտվել են իրենց տարբեր միացման կետերում էլեկտրական էներգիա արտադրելու և սպառելու հնարավորությունից:

Ստորև ներկայացված է ինքնավար էներգաարտադրության զարգացման տեմպերի դինամիկան 2016 թվականից մինչև 2025 թվականի օգոստոս ժամանակահատվածի փաստացի արձանագրված ցուցանիշներով:



Հաշվի առնելով ինքնավար էներգաարտադրության զարգացման անընդհատ աճող տեմպերի դինամիկան՝ կանխատեսվում է, որ 2026 թվականին ինքնավար էներգաարտադրողների էլեկտրակայանների ընդհանուր դրվածքային հզորությունը կգերազանցի 700 ՄՎտ-ը:

Ինքնավար էներգաարտադրող հանդիսացող սպառողների կողմից բարձրացված խնդիրների, ինչպես նաև ինքնավար էներգաարտադրության գործընթացի արդյունավետության գնահատման ուղղությամբ հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում 2026 թվականի ընթացքում ևս հանձնաժողովը հետամուտ է լինելու ինքնավար էներգաարտադրության կազմակերպմանը, հաշվառմանը և հատուցումներին առնչվող հարաբերությունների կատարելագործմանը:

Այս համատեքստում անհրաժեշտ է նշել նաև, որ ինքնավար էներգաարտադրության զարգացման այսչափ բարձր տեմպերի, ինչպես նաև հաշվառման և հատուցումների ներկայիս մոդելի պարագայում էլեկտրաէներգետիկական համակարգում առաջանում են խնդիրներ ինչպես տեխնիկական (արտադրության և սպառման ռեժիմների անհամապատասխանության, բաշխման ցանցում էլեկտրական էներգիայի լարման տատանումների մասով և այլն), այնպես էլ սակագնային քաղաքականության տեսանկյունից լրացուցիչ ֆինանսական ծախսերի մասով, որոնց ազդեցության մեղմման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայումս շրջանառվում է «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ: Նշված նախագծով նախատեսվում է ինքնավար էներգաարտադրողների էներգատեղակայանքների հզորության թույլատրելի առավելագույն սահմանաչափի նվազեցում, ինչպես նաև ինքնավար էներգաարտադրության հաշվարկների և հատուցումների մասով՝ ներկայումս կիրառվող «զուտ հաշվառման (net metering)» մոդելից աստիճանական անցում «զուտ բիլինգային (net billing)» մոդելին: Հիշյալ նախագծի ընդունման դեպքում հանձնաժողովը կլրամշակի իր իրավական ակտերը և կհամապատասխանեցնի «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված նոր կարգավորումներին:

Միաժամանակ, էլեկտրաէներգետիկական համակարգում հուսալիությանը և անվտանգությանն առնչվող խնդիրներն առաջանում են նաև ոլորտում մեծ տեմպերով զարգացող՝ գնման երաշխիք չունեցող մրցակցային արևային կայանների կառուցման և շահագործման արդյունքում: Նշված խնդիրների համակողմանի և ընդգրկուն

կարգավորումը նախատեսվում է ինչպես հարևան երկրների էներգահամակարգերի հետ զուգահեռ աշխատանքի ներուժի մեծացման, այնպես էլ էլեկտրական էներգիայի կուտակիչ (պահուստավորող) կայանների ներդրման խթանման ուղղություններով:

Մասնավորապես, ընթացքում են գտնվում «Իրան-Հայաստան 400 կՎ էլեկտրահաղորդման գծի կառուցման աշխատանքները, որի շահագործումը հնարավորություն կտա էապես բարելավել հատկապես արևային բեռի պիկային ժամանակահատվածներում էլեկտրական էներգիայի արտադրության և սպառման ռեժիմների անհամապատասխանության խնդիրը:

Բացի այդ, քննարկվում են նաև տարբերակներ՝ համապատասխան օրենսդրական դաշտի մշակման և էլեկտրական էներգիայի կուտակիչ կայանների ներդրման խրախուսման ուղղություններով՝ նպատակ ունենալով արևային ժամերին էլեկտրական էներգիայի ավելցուկի կուտակման և ոչ արևային ժամերին դրա սպառման միջոցով ևս մեղմել արևային էներգետիկայի զարգացման արդյունքում էլեկտրաէներգետիկական համակարգում հետզհետե աճող՝ ռեժիմների անհամապատասխանության խնդիրը:

Վերականգնվող էներգետիկայի զարգացման քաղաքականության շրջանակում կարևոր է նշել նաև, որ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 11-ին առաջին ընթերցմամբ ընդունված «Էներգետիկայի մասին» օրենքում լրացումների և փոփոխությունների արդյունքում՝

- յուրաքանչյուր անձի հնարավորություն է տրվել մատուցելու էլեկտրամոբիլների լիցքավորման ծառայություն, որը չի հանդիսանում էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ և, «Էներգետիկայի մասին» օրենքի իմաստով չի հանդիսանում նաև կարգավորման ենթակա գործունեություն: Միաժամանակ, սպառողին հնարավորություն է տրվել իրեն մատակարարված էլեկտրական էներգիան սպառել նաև իր սպառման համակարգի տեղակայման տարածքից դուրս գտնվող և իրեն պատկանող ավտոկայանատեղիում ու որպես ինքնուրույն գույքային միավոր գրանցված բնակելի նշանակության այլ տարածքում՝ գործող պահանջներին համապատասխան ինքնուրույն իրականացնելով այդ համակարգերի միմյանց միացումը: Նշված իրավակարգավորումների արդյունքում կապահովվի էլեկտրամոբիլների լիցքավորմանն առնչվող

հարաբերությունների իրավական հստակությունը և սպառողների համար կհեշտացվի ինչպես հիշյալ գործընթացը, այնպես էլ նրանց պատկանող կենցաղային կարիքների համար նախատեսված տարածքների էլեկտրամատակարարման ապահովումը.

- 150 կՎտ-ը գերազանցող հզորությամբ ինքնավար էներգաարտադրողների համար հնարավորություն է ստեղծվել նույն կարգավիճակն ունեցող մյուս անձանց հետ հավասար պայմաններով մասնակցելու էլեկտրաէներգետիկական մրցակցային շուկային՝ այդ կերպ նաև խթանելով էլեկտրաէնեգետիկական շուկայում մրցակցությունը և ընդլայնելով դրա մրցակցային հատվածում առևտրի մասնակիցների շրջանակը.
- հնարավոր տարընկալումներից խուսափելու նպատակով՝ «Էներգետիկայի մասին» օրենքում հստակ ամրագրվել է, որ ինքնավար խմբի մասնակիցների հարաբերությունները, ներառյալ՝ ինքնավար խմբի ներսում արտադրված էլեկտրական էներգիայի իրացմանն առնչվող հարցերը, որոշվում են ինքնավար խմբի մասնակիցների փոխադարձ համաձայնությամբ:

2. Ջրային ոլորտ

2.1. Ջրամատակարարման գրաֆիկների ծանուցում, խմելու ջրի սպառման ծավալների մոնիթորինգ և բաժանորդ դառնալու գործընթացի պարզեցում

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների համաձայն՝ մատակարարը պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ՝ նոյեմբեր ամսվա վերջին տասնօրյակում, իր պաշտոնական կայքում հրապարակել բաժանորդների հաջորդ տարվա ջրամատակարարման գրաֆիկը, ինչպես նաև այդ մասին կանոններով սահմանված կարգով բաժանորդների իրազեկված լինելու վերաբերյալ գրավոր ծանուցել հանձնաժողովին: Ինչպես յուրաքանչյուր տարի, 2026 թվականին ևս, հանձնաժողովը կվերահսկի «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության՝ կանոններով սահմանված՝ վերը նշված պարտավորությունների կատարման ընթացքը:

Որպես խմելու ջրի սակագների բարձրացումը որոշակիորեն զսպող մեխանիզմ, հանձնաժողովը, յուրաքանչյուր տարի, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ համատեղ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքում իրականացնում է մոնիթորինգ՝ փաստացի մատակարարվող խմելու ջրի չհաշվառվող ծավալները հայտնաբերելու նպատակով: 2026 թվականին նախատեսվում է իրականացնել վերը նշված մոնիթորինգի իրականացման կարգի փոփոխություն:

Բացի այդ, հաշվի առնելով «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած տեղեկատվությունը՝ ջրային կոմիտեի հետ համատեղ քննարկումների արդյունքում սկսվել և շարունակվում է մի շարք համայնքների բնակիչների՝ պարզեցված կարգով ընկերության բաժանորդ դառնալու գործընթացը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է այն բնակիչներին, որոնց սպառման համակարգերը պատմականորեն միացած են ջրային համակարգին և որոնք օգտվում են խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման ծառայություններից, սակայն տարբեր պատճառներով չեն հանդիսանում մատակարարի բաժանորդ նաև այն պատճառով, որ վարձակալության պայմանագրի շրջանակում պատշաճ կարգով բաժանորդների տվյալները չեն հանձնվել մատակարարին: Նշված միացումները հիմնականում Հայաստանի Հանրապետության մարզերում են և մերձմայրաքաղաքային ջրատարներից, որոնց հետևանքով չհաշվառվող ջրի օգտագործումը ջրասակավության շրջանում հանգեցնում է Երևան քաղաք մղվող խմելու ջրաքանակի նվազման: Քանի որ քննարկվող դեպքերը բազմաթիվ են, և ջրային համակարգում չհաշվառվող ջրի քանակների նվազեցման արդյունքում կավելանա մանրածախ ջրամատակարարման ծավալը, որն իր հերթին դրական ազդեցություն կունենա սպառողներին մատուցվող ծառայությունների սակագների վրա, նշված բնակիչները կդառնան մատակարար կազմակերպության բաժանորդ՝ առանց նոր միացման ընթացակարգի: Նշված գործընթացը կշարունակվի նաև 2026 թվականին:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի համաձայն՝ 2020 թվականի հունվարի 1-ից մեծածախ ոռոգման ջրամատակարարման ծառայությունները մատուցվում են հանձնաժողովի տրամադրած լիցենզիայի հիման վրա: Ներկայումս շրջանառվում է օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ, ըստ որի՝ հիշյալ ծառայությունները հանձնաժողովի կողմից կլիցենզավորվեն, ինչպես

նաև հանձնաժողովին կվերապահվի մեծածախ ոռոգման ջրի ոլորտի կարգավորման ամբողջական գործիքակազմ՝ ներառելով լիցենզավորման գործընթացից մինչև լիցենզավորված անձի գործունեության վերահսկման, տուժանքների կիրառման իրավասություններ: Նշված օրենքի ընդունումից, ինչպես նաև դրա շրջանակում «Լիցենզավորման մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքներում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո նախատեսվում է մշակել և հանձնաժողովի որոշմամբ հաստատել ջրային ոլորտում ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ մատուցող ընկերությունների գործունեության լիցենզավորման կարգը, որի հիման վրա հանձնաժողովը կնախաձեռնի «Ջրառ» ՓԲԸ-ին ոռոգման ջրամատակարարման ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու գործընթացը:

2.2. Սակագնային քաղաքականություն

Հիմք ընդունելով հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397-Ա որոշմամբ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ԼՋ№0001 լիցենզիայի պայմանների №3 հավելվածով ամրագրված բազիսային սակագների ճշգրտման մեխանիզմը և հաշվի առնելով խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների սակագների ճշգրտման վրա ազդող գործոնները (մանրածախ ջրամատակարարման ծավալի փոփոխություն, սղաճ, ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխություն, ջրային համակարգն այլ նպատակներով օգտագործումից և խմելու ջուրը ոռոգման նպատակով մատակարարելուց ստացվող լրացուցիչ հասույթի նվազեցում)՝ 2026 թվականին ևս կճշգրտվեն և կսահմանվեն բաժանորդներին մատուցվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների պայմանագրային հերթական տարվա սակագները:

Միաժամանակ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի №1880-Ն որոշումը՝ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի №1122-Ն որոշման համաձայն սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողները կդիտարկվեն որպես առանձին սպառողական խումբ, որոնց

համար կսահմանվեն խմելու ջրի մատակարարման հնարավորինս նվազագույն սակագներ:

Բացի այդ, հանձնաժողովը «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել է բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա՝ 500 կՎտ հզորությամբ արևային էլեկտրակայան կառուցելու նպատակով, ինչի արդյունքում՝ կկրճատվի խմելու ջրի (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ էլեկտրական էներգիայի ծախսը: Ընկերության կողմից նոր հայտերի ներկայացման դեպքում՝ բացառապես սեփական կարիքների համար կտրամադրվեն էլեկտրական էներգիայի արտադրության նոր լիցենզիաներ:

2026 թվականին հանձնաժողովը կմասնակցի նաև «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության ներդրումների, գույքի, ընկերության կողմից սպասարկվող տարածքում նոր համայնքների ներգրավման, սակագնային սցենարներում բազիսային ծավալների փոփոխության և այլ հարցերի վերաբերյալ վարձակալության պայմանագրում փոփոխությունների կատարման և համապատասխան համաձայնագրի կնքման աշխատանքներին:

3. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները և Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի ձեռքբերումները, ոլորտի զարգացման շարունակականության ապահովման նկատառումից ելնելով՝ հանձնաժողովը 2026 թվականի ընթացքում կշարունակի աշխատանքներն էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի դինամիկ և համաչափ զարգացման, մրցակցության խթանման, գործարար և ներդրումային միջավայրի բարելավման, բաժանորդների իրավունքների և շահերի պաշտպանության, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության և ներթափանցելիության ապահովման, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ:

Ենթակառուցվածքների զարգացում, ընդլայնում, նոր տեխնոլոգիաների ներդրում և ծառայությունների հասանելիության ապահովում.

Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային ամրակցված և շարժական կապի (հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների) զարգացման և ենթակառուցվածքների հասանելիության ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքում.

- հանրապետության բոլոր (100%) բնակավայրերում հասանելի են ամրակցված հեռախոսակապի ծառայությունները, 755 (75,3%) բնակավայրում՝ ամրակցված լայնաշերտ լարային ինտերնետի ծառայությունները, որից 743 (74,1%) բնակավայրում, որոնք ընդգրկում են հանրապետության բնակչության շուրջ 98%-ը՝ օպտիկամանրաթելային ցանցերը (բաժանորդներին առաջարկվող լայնաշերտ ինտերնետի 20-100 Մբիթ/վ և ավելի արագությամբ), իսկ 996 (99,5%) բնակավայրերում՝ 2-30 Մբիթ/վ արագությամբ լայնաշերտ ինտերնետի անլար տեխնոլոգիաների ծառայությունները,
- հանրապետության բոլոր (100%) բնակավայրերում հասանելի են շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծառայությունները, իսկ հանրապետության 29 քաղաքային և 19 գյուղական բնակավայրերում, ներառյալ՝ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում, մասամբ հասանելի է նաև 5G տեխնոլոգիայի ցանցը (Non Stand Alone/Dynamic Spectrum Sharing/Carrier aggregation - ոչ ինքնավար ռեժիմի ցանցի/սպեկտրի դինամիկ բաժանման/կրող հաճախականության ագրեգացիայի լուծումների հիման վրա):

Ընդ որում, հանրապետության բնակավայրերի 92.3%-ում (925 բնակավայրերում) հասանելի է առնվազն 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը, իսկ 24.7%-ում (248 բնակավայրերում, որը բնակչության ներգրավվածության առումով կազմում է հանրապետության բնակչության շուրջ 77%-ը)՝ 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը:

Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհների 95,8%-ում հասանելի է առնվազն մեկ օպերատորի, 80,8%-ում՝ առնվազն 2 օպերատորի և 51%-ում՝ 3 օպերատորի շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը,

➢ զուգահեռաբար, ընթացքի մեջ են 2023 թվականին 700ՄՀց և 800ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածների մրցութային, ինչպես նաև լիցենզիոն գործընթացների շրջանակում՝ շարժական կապի օպերատորների նկատմամբ սահմանված պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքները, որոնց իրականացմամբ 2-3 տարիների ընթացքում և, մասնավորապես, 2026 թվականին՝

- հանրապետության բնակավայրերում և միջպետական ավտոմոբիլային ճանապարհներին բոլոր 3 օպերատորների փոխադարձ ներթափանցելի 4G+(LTE Advanced) ծածկույթի հասանելիության ներկայիս ցուցանիշը 24,7%-ից կհասցվի առնվազն 80%-ի,
- հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհների առնվազն 80%-ում հասանելի կլինի նաև բոլոր 3 օպերատորների 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը,
- Երևան, Գյումրի, Վանաձոր, իսկ նշված հետագա տարիներին՝ նաև Կապան, Նոյեմբերյան, Իջևան, Դիլիջան, Ծաղկաձոր քաղաքներում, յուրաքանչյուր քաղաքի վարչական (կադաստրային) տարածքի ավելի քան 50 տոկոսում, ինչպես նաև Զվարթնոց, Գյումրու և Կապանի օդանավակայանների, Հայաստանի Հանրապետության սահմանային բոլոր գործող մաքսակետերի ամբողջ տարածքներում կապահովվի «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի շարժական լայնաշերտ կապի 5G տեխնոլոգիայի բացօթյա ծածկույթի հասնելիությամբ,
- կապիտալ ներդրումների իրականացմամբ՝ հանրապետության պաշտպանունակության ամրապնդման նպատակով կընդլայնվեն շարժական կապի բոլոր 3 օպերատորների կապի ենթակառուցվածքները, որոնց ծավալը՝ պարտավորությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետում, կկազմի ընդհանուր առմամբ շուրջ 2 մլրդ դրամ,
- օպտիկամանրաթելային հասանելիություն չունեցող 302 բնակավայրերում «Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից պետք է ապահովվի լարային օպտիկամանրաթելային և (կամ) դրան որակապես համարժեք անլար տեխնոլոգիայի ամրակցված լայնաշերտ կապի հասանելիությամբ, այսինքն՝ արդյունքում նշված տեխնոլոգիայի լայնաշերտ ինտերնետ կապը հասանելի կլինի հանրապետության բոլոր բնակավայրերում (ներկայումս՝

օպտիկամանրաթելային կապի հասանելիությամբ ապահովված են բնակավայրերի 74,1%-ը՝ (743 բնակավայր):

- 2024 թվականին մեկնարկած և 2025 թվականին իրականացված՝ ռադիոհաճախականային ռեսուրսների տրամադրման մրցութային գործընթացի արդյունքում տրամադրված 2300-2400 ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություններով սահմանված պարտավորությունների կատարմամբ՝ «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 3-ից 7 տարվա ընթացքում, ըստ ժամանակացույցի, շարժական կապի լայնաշերտ 5G տեխնոլոգիայի ծառայությունների հասանելիությամբ (բացօթյա/outdoor ծածկույթ) պետք է ապահովվի հանրապետության քաղաքային յուրաքանչյուր բնակավայր՝ համապատասխան բնակավայրի վարչական (կադաստրային) տարածքի առնվազն 60%-ը, ներառյալ՝ «Ինժեներական քաղաքի», «Ակադեմիական քաղաքի», Զվարթնոց, Գյումրու և Կապանի օդանավակայանների, Հայաստանի Հանրապետության սահմանային բոլոր գործող և նոր կառուցվող մաքսակետերի տարածքները, ինչպես նաև հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների (ներառյալ նոր կառուցվող) ընդհանուր երկարության 98%-ը կապահովվի լայնաշերտ ինտերնետային բացօթյա (outdoor) ծածկույթով (որից առնվազն 10%-ը՝ 5G տեխնոլոգիայով):

Ստորև բերված են հանրապետության բնակավայրերում շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթի և ամրակցված կապի լայնաշերտ ինտերնետի հասանելիության դիագրամները՝ ըստ կիրառվող տեխնոլոգիաների և փոխադարձ ներթափանցելիության հասանելիության, ինչպես նաև վերոնշյալ պարտավորությունների կատարմամբ դրանց թիրախային արդյունքները.

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթի փոխադարձ ներթափանցելիություն (%)



Ընդհանուր ծածկույթ առնվազն 2 օպերատոր 3 օպերատոր "Տելեկոմ Արմենիա" ԲԲԸ-ի պարտավորության կատարմամբ

4G+/LTE Advanced տեխնոլոգիայի ծածկույթի հասանելիությունը ընդհանուր օգտագործման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին՝ ըստ օպերատորների



Ամրակցված կապի լայնաշերտ ինտերնետի հասանելիությունը բնակավայրերում (%)



Այս համատեքստում պետք է նշել, որ հանրապետության բնակավայրերում օպտիկամանրաթելային ցանցերի հասանելիության վերոնշյալ 74,1% ցուցանիշի արձանագրումն ու օպտիկամանրաթելային հասանելիություն չունեցող 302 բնակավայրերում ամրակցված լայնաշերտ կապի ենթակառուցվածքների հասանելիության ապահովման մասով «Յուքոմ» ընկերության նկատմամբ լիցենզիոն պարտավորության սահմանումը նպաստում են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված՝ հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերի առնվազն 80%-ում լայնաշերտ (օպտիկամանրաթելային) կապով և պետական թվային ծառայությունների հասանելիությամբ ապահովելու միջոցառման իրականացմանը:

Նկատի ունենալով ենթակառուցվածքների զարգացման և ծառայությունների հասանելիության ընդլայնման աշխատանքների շարունակականությունը՝ 2026 թվականի ընթացքում ակնկալվում է նաև ամրակցված լայնաշերտ (լարային՝ առավելապես օպտիկամանրաթելային տեխնոլոգիայի) ինտերնետ ծառայությունների բաժանորդների թվաքանակի աճ՝ 5-10%, ինչպես նաև ամրակցված (լարային) և շարժական լայնաշերտ ինտերնետ կապի հոսքերի աճ՝ 5-20% միջակայքերի սահմաններում:

Զուգահեռաբար, հանձնաժողովը շարունակելու է աշխատանքները հանրապետությունում շարժական կապի լայնաշերտ 5G տեխնոլոգիայի ներդրման ու զարգացման, այդ թվում՝ լիարժեք 5G տեխնոլոգիային բնորոշ տվյալների հաղորդման բարձր արագություններով և ցանցի փոքր ընդհատումներով ծառայությունների մատուցումն ապահովելու ուղղությամբ: Մասնավորապես, հաշվի առնելով 5G տեխնոլոգիայի ներդրման համար արդեն իսկ իրականացված ռադիոհաճախականությունների տրամադրման մրցութային գործընթացների արդյունքները, նախատեսվում է ոլորտի իրավասու և շահագրգիռ այլ մարմինների հետ քննարկումների հաշվառմամբ դիտարկել հանձնաժողովի տնօրինման տակ գտնվող 3600-3800ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի, ինչպես նաև 700ՄՀց և 2600ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթների ազատ հատվածների տրամադրման մրցութային գործընթացների արդյունավետ կազմակերպման

մոտեցումներն ու դրանց արդյունքներով կազմակերպել և իրականացնել համապատասխան մրցութային գործընթացներ:

Հանձնաժողովի իրավական ակտերի բարեփոխումներ.

Հանձնաժողովը շարունակելու է աշխատանքներն էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի օրենսդրության լրամշակման և բնագավառի զարգացմանը նպաստող նոր կարգավորումների ներդրման ուղղությամբ, որոնցից առանցքայիններն են.

- էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության (կարգավորող ենթաօրենսդրական ակտերի) լրամշակում՝ համաձայն Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԸԳՀ/CEPA) ամրագրված հանձնառության: Նշված աշխատանքները հանձնաժողովի կողմից իրականացվելու են Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ համագործակցությամբ՝ ԵՄ փորձագետների կողմից ՀԸԳՀ իրականացմանն ու մոնիթորինգին տեխնիկական աջակցությամբ, ինչպես նաև «ԵՄ-ն հանուն թվային օրակարգի» (EU4Digital) նախաձեռնությամբ տրամադրվող տեխնիկական աջակցության շրջանակում՝ Համաշխարհային բանկի փորձագիտական խմբի միջոցով,
- ԵՄ կարգավորումներին (BCRD-Broadband cost reduction directive, GIA-Gigabit infrastructure act) համահունչ ենթակառուցվածքների համատեղ օգտագործման օրենսդրության (լայնաշերտ կապի ենթակառուցվածքների զարգացման նպատակով կապի և այլ ենթակառուցվածքների օգտագործման հնարավորության ստեղծում, որը կնպաստի լայնաշերտ կապի ցանցերի ներդրման ծախսերի նվազեցմանը) մշակում: Նշված աշխատանքները հանձնաժողովի կողմից իրականացվելու են Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ համագործակցությամբ՝ Եվրոպական միության արևելյան գործընկերության երկրներում ներդրումներ ներգրավելու և ծառայությունների մրցակցությունը խթանելու, քաղաքական, իրավական և կարգավորող միջավայրի բարելավման

նպատակով՝ «ԵՄ-ն հանուն թվային օրակարգի» (EU4Digital) նախաձեռնությամբ տրամադրվող տեխնիկական աջակցության շրջանակում՝ Համաշխարհային բանկի փորձագիտական խմբի միջոցով:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառը տնտեսության դինամիկ զարգացող ճյուղերից է, ուստի հանձնաժողովը նոր տեխնոլոգիաների և ծառայությունների ներդրման համատեքստում մշտապես հետևում է բնագավառի միջազգային զարգացման միտումներին՝ կարգավորման գործընթացն այդ միտումներին առավել համահունչ դարձնելու նպատակով:

4. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար, ինչպես նաև հնարավորություն են տալիս ձևավորել կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների համապատասխան վիճակագրական բազա:

Ինչպես յուրաքանչյուր տարի, 2026 թվականի ընթացքում ևս հանձնաժողովն էներգետիկայի բնագավառի, ջրային ոլորտի կարգավորվող ընկերություններից, «Հայփոստ», «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական և «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերություններից կստանա ֆինանսական հաշվետվություններ և կկատարի համապատասխան վերլուծություններ:

Էլեկտրաէներգետիկական համակարգում ֆինանսական կայունություն, ինչպես նաև շուկայի կարգավորվող հատվածում առաքված էլեկտրաէներգիայի և մատուցված ծառայությունների դիմաց «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 100% վճարումներ ապահովելու նպատակով 2026 թվականին ևս հանձնաժողովը կշարունակի վերահսկել իր կողմից ներդրված հատուկ հաշվի մեխանիզմի բնականոն աշխատանքը՝ երաշխավորելով էլեկտրաէներգետիկական

շուկայի կարգավորվող հատվածում երաշխավորված մատակարարի կողմից արտադրողներին և շուկային ծառայություններ մատուցող ընկերություններին վճարումների կատարումը:

Միաժամանակ, էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում հաշվեկշռման ծառայություն մատուցող արտադրողի (ՀԾՄ) հատուկ հաշվում դրամական միջոցների մուտքերի և ելքերի շրջանառության, ինչպես նաև վերջինիս կողմից երկրորդային և երրորդային պահուստ ապահովող արտադրողներից (ՀԷԱ կայաններ) ձեռքբերված հզորության (էլեկտրական էներգիայի) դիմաց վճարումների կատարման ժամկետների նկատմամբ՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններով սահմանված կարգավորումներին համապատասխանությունը վերահսկելու նպատակով, հանձնաժողովը 2026 թվականին ևս «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունից ամսական արդյունքներով կստանա վերջինիս հատուկ հաշվում դրամական միջոցների շարժի վերաբերյալ տեղեկատվությունը և կվերլուծի այն:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով, հանձնաժողովը 2026 թվականին ևս, կշարունակի իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման քաղաքականության, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման արդյունքում շուկայի մասնակիցների գործառույթների ֆունկցիոնալ փոփոխություններով և առանձնահատկություններով պայմանավորված՝ կարգավորվող ընկերություններից առավել հասցեական տեղեկատվություն ստանալու նպատակով 2026 թվականին ևս, անհրաժեշտության դեպքում, կիրականացվեն հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերի լրամշակման աշխատանքներ:

5. Սպառողների շահերի պաշտպանություն

5.1. Սպառողների դիմումների քննարկում

Սպառողների շահերի պաշտպանությունը հանձնաժողովի գործունեության առանցքային ուղղություններից է և կրում է բազմակողմանի բնույթ: Նշված աշխատանքներում իր ծավալով առանձնանում է սպառողների դիմում-բողոքների քննարկումը:

Հաշվի առնելով մատուցվող հանրային ծառայությունների կենսական նշանակությունը սպառողների համար՝ վերջիններիս կողմից բարձրացվող հարցերը կրում են մեծածավալ բնույթ (2025 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ՝ 2007 դիմում):



Ավելին, շատ հաճախ դրանք հանձնաժողովի քննարկմանն են ներկայացվում ոչ միայն անմիջապես սպառողների կողմից, այլև տարբեր պատկան մարմինների և սպառողների շահերի պաշտպանությամբ հանդես եկող կառույցների միջոցով (Հայաստանի Հանրապետության կառավարություն, Ազգային ժողովի

պատգամավորներ, մարդու իրավունքների պաշտպան, ոլորտային հասարակական կազմակերպություններ):

Այս առումով հանձնաժողովը, մշտապես ուշադրության կենտրոնում պահելով սպառողների դիմում-բողոքների օպերատիվ արձագանքմանն ուղղված մեխանիզմների կատարելագործումը և, նպատակ ունենալով հանրային իրազեկման մակարդակի բարձրացման միջոցով ապահովել վերջիններին վերաբերող խնդիրների համակողմանի և արդյունավետ լուծում՝ միջոցներ է ձեռնարկել հետևյալ ուղղություններով, որոնք 2026 թվականին ևս կրելու են շարունակական բնույթ.

- սպառողների հետ կապն ապահովելու նպատակով հանձնաժողովում գործող՝ դիմում-բողոքների քննարկման համար նախատեսված հեռախոսահամարով տրվում է օպերատիվ տեղեկություն՝ սպառողներին հուզող հարցերի, ինչպես նաև խորհրդատվություն՝ մատակարար-սպառող հարաբերություններում դիմումատուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ.
- հանրության առջև հաշվետվողականության ապահովման շրջանակում հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահի կողմից, նշանակված են սպառողների հետ հանդիպումների օրեր՝ սպառողներին հնարավորություն տալով բարձրացնել իրենց հուզող հարցերը և ստանալ պարզաբանումներ.
- հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում գործում է www.e-request.am միասնական հարթակի միջոցով էլեկտրոնային դիմում-բողոք ներկայացնելու հնարավորություն, որը միտված է դիմումների քննարկման գործընթացն առավել թափանցիկ և սպառողների կողմից վերահսկելի դարձնելուն և թույլ է տալիս նաև առցանց ռեժիմով հետևելու դիմում-բողոքի քննարկման ընթացքին ու ստանալու առցանց պատասխան.
- հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում ներկայացված է սպառողների կողմից հաճախակի տրվող հնարավոր հարցերի և դրանց պատասխանների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, որոնք պարբերաբար թարմացվում են՝ համապատասխանեցվելով գործող կարգավորումներին.

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից հանձնաժողով է ներկայացվում սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ եռամսյակային տեղեկատվություն, որը, որպես սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բաղադրիչ, քննարկվելուց հետո հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում.
- մինչև 2026 թվականի առաջին եռամսյակի ավարտը հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվի դիմումների քննարկման գործընթացի վերաբերյալ տարեկան տեղեկատվությունը:

5.2. Սպասարկման որակի ցուցանիշներ

Սպառողների կողմից բարձրացված խնդիրների շարքում իր կարևորությամբ առանձնանում է կարգավորվող ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների սպասարկման որակի սահմանված ցուցանիշների ապահովումը: Նշված գործընթացը մշտապես գտնվում է հանձնաժողովի ուշադրության առանցքում՝ ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվության վերլուծության և հանձնաժողովի կողմից տեղում իրականացվող մոնիթորինգի, այնպես և սպառողների դիմում–բողոքների ուսումնասիրության միջոցով:

Մասնավորապես, հանձնաժողովն էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերություններից սպառողների սպասարկման որակի փաստացի ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային պարբերականությամբ ստացված տեղեկատվության, ինչպես նաև սպառողների դիմում–բողոքների ուսումնասիրության հիման վրա մոնիթորինգի է ենթարկում՝

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների՝ սպառողների մատակարարման ընդհատումների քանակի և տևողության ցուցանիշները,
- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումներին, բողոքներին և հարցադրումներին պատասխանելու ժամկետները,

- սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշները,
- առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից կատարված վերահաշվարկները և հաշվարկված տույժերը,
- նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին, նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգը գազամատակարարման համակարգին, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության գործընթացներում սահմանված ժամկետների խախտումները և դրանց պատճառները:

Սպառողների սպասարկման որակի պահանջների խախտման դեպքում իրավախախտ տնտեսվարողների նկատմամբ կիրառվում են օրենքով սահմանված համաչափ տույժեր և պարտավորեցվում իրենց խախտած ցանկացած իրավունքի ամբողջական վերականգնում:

Նշվածը, սակայն, ոչ միայն չի բացառում, այլև ենթադրում է ոլորտում արձանագրված թերությունների համակողմանի և խորքային վերլուծություն՝ վեր հանելով դրանց հիմքում ընկած իրական պատճառները և խորամուխ լինելով դրանց առավել արդյունավետ կարգավորմանն ուղղված լուծումների որոնումների մեջ: Նշված լուծումները դառնում են համապատասխան ծառայության մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակման առարկա՝ մատակարար–սպառող հարաբերություններին վերաբերող կարգավորումները դարձնելով ժամանակի պահանջներին համահունչ:

Հանրային ծառայությունների ոլորտում մատակարար-սպառող հարաբերությունները կանոնակարգող հիմնարար փաստաթղթերի, մասնավորապես, էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնների, էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնների, բնական գազի մատակարարման և օգտագործման, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների

լրամշակումն ու կատարելագործումը կրում են շարունակական բնույթ և անհրաժեշտության դեպքում կիրականացվեն նաև 2026 թվականին:

Հարկ է նշել, որ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը եռամսյակային արդյունքներով հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Սպասարկման որակի վերահսկողությանն ուղղված աշխատանքներն ունեն շարունակական բնույթ և կիրականացվեն նաև 2026 թվականի ընթացքում:

6. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը

Համաձայն գործող օրենսդրության՝ հանձնաժողովն ապահովում է իր և իր կողմից կարգավորվող գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը՝ զանգվածային լրատվամիջոցների, պաշտոնական ինտերնետային կայքի և այլ միջոցներով: Այս ուղղությամբ հանձնաժողովի ձեռնարկած քայլերը կրում են հետևողական բնույթ և միտված են հանրության շրջանում կառույցի դերի վերաբերյալ տեղեկատվության ընդլայնմանը և վերջինիս նկատմամբ վստահության բարձրացմանը: Մասնավորապես.

- հանձնաժողովը, որպես կոլեգիալ ինքնավար մարմին, օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում ընդունում է որոշումներ՝ դռնբաց նիստերի միջոցով: Այդ առումով, հանձնաժողովը, իր սահմանած կարգի համաձայն, հայտարարում է նիստերի անցկացման վայրը, օրը, ժամը և հնարավորություն է ընձեռում շահագրգիռ անձանց ու հանրության ներկայացուցիչներին մասնակցելու նիստերին՝ իր վարչական շենքի հնարավորությունների սահմաններում, ստանալու օրակարգ և քննարկվող նյութերը, ներկայացնելու տեղեկություններ և հանդես գալու ելույթներով: Ինչպես յուրաքանչյուր տարի, 2026 թվականին ևս սպառողների համար սակագների հաշվարկման մեթոդիկաները, բնագավառների (համակարգերի) կառուցվածքին, սպառողների սպասարկման որակին և պայմաններին վերաբերող հարցեր նիստում քննարկվելու դեպքում՝ հանձնաժողովը ողջամիտ

ժամկետում այդ մասին կիրազեկի Հայաստանի Հանրապետության կառավարությանը, կարգավորվող ոլորտի իրավասու պետական մարմնին և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին՝ հնարավորություն ընձեռելով նրանց ներկայացուցիչներին մասնակցելու նիստերին, հանդես գալու ելույթներով և առաջարկություններով,

- հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքը պարբերաբար թարմացվում է՝ հնարավորություն ընձեռելով զանգվածային լրատվամիջոցներին, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին և ցանկացած շահագրգիռ անձի իրազեկվել հանձնաժողովի գործունեության, հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման ներկա գործընթացների, ծառայությունների սպասարկման որակի, մատակարար-սպառող փոխհարաբերությունների և այլնի մասին,
- հանձնաժողովի կայքը հնարավորություն է ընձեռում հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերություններին՝ պաշտոնական ինտերնետային կայքում գործող առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային հարթակի միջոցով համապատասխան հաշվետվությունները և տեղեկատվությունը հանձնաժողով ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ առանց վարչական մարմին այցելելու,
- հանրային ծառայությունների ոլորտում սպառողների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև սպառողների կողմից՝ իրենց հուզող հարցերի պատասխանները հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում ինքնուրույն և առավել արագ գտնելու հնարավորությունն ապահովելու նպատակով 2026 թվականին նախատեսվում է լրամշակել կայքի «Հարց և պատասխան» բաժինը, որը սպառողներին հնարավորություն կտա հարցերի պատասխաններն, ըստ առանձին ոլորտների, կայքի համապատասխան բաժնում փնտրել և գտնել առավել դյուրինացված եղանակով:


ՀԾԿՀ
psrc.am
ՀԿ-ներ
Սոց. ցանցեր
ՋԼՄ-ներ
Հանձնաժողովի նիստերի օրակարգեր, քննարկվող հարցեր
Հանձնաժողովի որոշումներ
Հանձնաժողովի հաշվետվություններ և գործունեության ծրագրեր
Հանձնաժողովի պաշտոնատար անձանց հարցազրույցներ, պարզաբանումներ
Կարգավորվող բնագավառների ոլորտային ցուցանիշներ
Կարգավորվող անձանց կողմից հաշվետվությունների առցանց ներկայացում
Սպառողների կողմից դիմում-բողոքների առցանց ներկայացում e-request.am
Սպառողների կողմից հաճախակի տրվող հարցեր և պատասխաններ
Հանձնաժողովի գործունեությանն առնչվող այլ հրապարակումներ
Հանձնաժողովի գործունեությանն առնչվող հանրային իրազեկումներ

Կարևորելով հանրային իրազեկման մակարդակի բարձրացումը և այդ աշխատանքներում սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների դերը՝ հանձնաժողովը 2026 թվականին կշարունակի հանրային հնչեղություն ունեցող, մասնավորապես, սակագների ձևավորմանը, փոփոխությանը և սպառողների իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի շուրջ սերտ համագործակցությունը ոլորտային հասարակական կազմակերպությունների հետ:

Հաշվի առնելով հանրության առջև հաշվետու լինելու օրենքի պահանջը, ինչպես յուրաքանչյուր տարի, այնպես և 2026 թվականին, հանձնաժողովը կհրապարակի նախորդ տարվա իր գործունեության հաշվետվությունը:

2026 թվականին հանձնաժողովի անդամները և մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես կգան ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով:

7. Միջազգային համագործակցություն

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է միջազգային կազմակերպությունների և այլ երկրների կարգավորող մարմինների հետ:

Մասնավորապես, հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և Հայաստանի Հանրապետությունում այն կիրառելու կամ կիրառման հնարավորությունները դիտարկելու նպատակով հանձնաժողովը համագործակցում է Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Ասիական զարգացման բանկի, Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU), Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA), ԵՄ համապատասխան կազմակերպությունների, մասնավորապես՝ ԵՄ արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների ցանցի (EaPeReg), Էլեկտրոնային հաղորդակցության եվրոպական կարգավորողների մարմնի (BEREC), Ջրի եվրոպական կարգավորողների կազմակերպության (WAREG), Էներգետիկ համայնքի (Energy Community) հետ: Նշված կազմակերպությունների կողմից պարբերաբար կազմակերպվում են սեմինարներ տարբեր երկրների կարգավորողների համար

էներգետիկ շուկաների ազատականացման, բաշխման և հաղորդման ցանցերի ցանցային կանոնների մշակման, ցանցերի հուսալիության և անվտանգության, ներառյալ՝ կիբերանվտանգության, վերականգնվող ռեսուրսներից էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի զարգացման, ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) կարգավորման քաղաքականության, լայնաշերտ ինտերնետ հասանելիության զարգացման, դրա քարտեզագրման, 5G տեխնոլոգիայի ներդրման, ռադիոհաճախականությունների արդյունավետ օգտագործման վերաբերյալ, որը հնարավորություն է տալիս հանձնաժողովին ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը և ստանալ համապատասխան տեղեկատվություն:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ/CEPA) հանձնառության՝ 2026 թվականի ընթացքում հանձնաժողովը նախատեսում է մշակել և ներկայացնել էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման թեմայով ԵՄ ինստիտուցիոնալ հզորացման TWINNING գործիքի աջակցությամբ կազմակերպվող ծրագրի հայտ:

Հանձնաժողովը, հանդիսանալով Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA), ԵՄ արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության կարգավորող մարմինների ցանցի (EaPeReg), Ջրի եվրոպական կարգավորողների կազմակերպության (WAREG) անդամ և Էներգետիկ համայնքի (Energy Community) դիտորդ կազմակերպություն, մասնակցում է նշված կազմակերպությունների տարեկան ընդհանուր ժողովներին, ինչպես նաև վերջիններիս կողմից ստեղծված համապատասխան կոմիտեների և աշխատանքային խմբերի նիստերին:

Այս համատեքստում 2026 թվականին հանձնաժողովը նախատեսում է Երևանում հյուրընկալել WAREG 37-րդ լիագումար ժողովը, ինչը հնարավորություն կտա

հանձնաժողովին WAREG անդամ ազգային կարգավորող մարմիններին ներկայացնել ջրային ոլորտի կարգավորման իր լավագույն փորձը:

Հանձնաժողովը 2026 թվականին նույնպես շարունակելու է ակտիվ մասնակցությունը EaPeReg ցանցի աշխատանքներին: Մասնավորապես, նախագահելու է ցանցը Չեխիայի հեռահաղորդակցության գրասենյակի (CTU) հետ համատեղ և մասնակցելու է ցանցի հետագա զարգացման աշխատանքներին EaPeReg Troika ձևաչափով: Հանձնաժողովի նախագահության շրջանակում նախատեսվում է EaPeReg ցանցի լիագումար նիստերից մեկը անցկացնել Երևանում:

Հանձնաժողովը, որպես EaPeReg ցանցում գործող կարգավորողների անկախության և լայնաշերտի հարցերով աշխատանքային խմբի (IRB EWG) համանախագահող, շարունակելու է հեռահաղորդակցության շուկաների վերլուծության, լայնաշերտ ինտերնետ հասանելիության և հեռահաղորդակցության բնագավառի օրենսդրության մոտարկման աշխատանքները:

Միևնույն ժամանակ, որպես EaPeReg ցանցում գործող ռոումինգի հարցերով աշխատանքային խմբի (REWG) նախագահող, հանձնաժողովը շարունակելու է համագործակցությունը «ԵՄ-ն հանուն թվային օրակարգի» (EU4Digital) նախաձեռնության հետ՝ Ռոումինգի տարածաշրջանային համաձայնագրի ստորագրմանն ուղղված աշխատանքների, ինչպես նաև ձայնային զանգերի վերջնավորման մեծածախ շուկայի վերլուծության իրականացման նպատակով:

ԵՄ ԱԼԳ երկրների հեռահաղորդակցության կարգավորողների ցանցում ռադիոհաճախականությունների հարցերով աշխատանքային խմբի շրջանակում հանձնաժողովը շարունակելու է աշխատել ռադիոհաճախականությունների տիրույթի տարածաշրջանային համաձայնագրի ստորագրման և հետագա կիրարկման ուղղությամբ:

Ելնելով կարգավորող մարմինների հետ համագործակցության ընդլայնման, կարգավորման ենթակա ոլորտներում փորձի փոխանակման նկատառումներից, ինչպես նաև հաշվի առնելով Չեխիայի հեռահաղորդակցության գրասենյակի (CTU), Լատվիայի հանրային ծառայությունների հանձնաժողովի (PUC), Վրաստանի Էներգետիկայի կարգավորման ազգային հանձնաժողովի (GNERC) և Լեհաստանի էլեկտրոնային հաղորդակցության գրասենյակի (UKE) հետ ստորագրված փոխըմբռնման հուշագրերը՝ հանձնաժողովը շարունակելու է վերջիններիս հետ համագործակցությունը:

EU4Digital

2026 թվականի ընթացքում ԵՄ արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների ցանցում շարունակվելու են նաև աշխատանքները E&Y խորհրդատվական ընկերության հետ՝ EU4Digital նախաձեռնության հետ համագործակցության շրջանակում, որոնք ուղղված են կարգավորող մարմինների անկախության ամրապնդմանը և նպաստում են «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով» նախատեսված հանձնառությունների կիրարկման ճանապարհային քարտեզում ներառված միջոցառումների իրականացմանը:

Վերոնշյալ համաձայնագրի կիրարկման միջոցառումների ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով՝ շարունակվելու են համատեղ աշխատանքները Համաշխարհային բանկի հետ, ինչպես նաև հանձնաժողովը շարունակելու է մասնակցել Եվրոպայի էներգետիկ կարգավորողների խորհրդի (CEER) կողմից կազմակերպվող աշխատանքներին՝ «Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման խթանում» EU4Energy-ի ծրագրի շրջանակում:

2026 թվականի ընթացքում կշարունակվեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համակարգմամբ գործող միջազգային աշխատանքային խմբի շրջանակում միջազգային ռոումինգ ծառայությունների արդար սակագների ներդրման համար անհրաժեշտ պայմանների ձևավորմանն ուղղված աշխատանքները: Այս առնչությամբ հանձնաժողովը շարունակելու է նաև աշխատանքները Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օպերատորների էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում միջազգային տրաֆիկի փոխանցումների ժամանակ խարդախությունների կանխարգելման հարցերով աշխատանքային ենթախմբի շրջանակում:

Հանձնաժողովը, հանդիսանալով Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի «Բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին արձանագրության» (պայմանագրի հավելված 20) շրջանակում նախատեսված աշխատանքների

իրականացման համար Հայաստանի Հանրապետության կողմից լիազորված մարմին, շարունակելու է մասնակցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի բնական մենաշնորհների գծով Խորհրդատվական կոմիտեի աշխատանքներին, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության օրենսդրության մոտարկման մասով:

Համագործակցելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ՝ հանձնաժողովը կշարունակի համագործակցությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան կառույցների հետ՝ Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքներում:

8. Հանձնաժողովի կողմից բյուջետային մուտքերի ապահովում և 2026 թվականի պահպանման ծախսերի նախահաշիվ

2026 թվականին հանձնաժողովի վերահսկողության ներքո կգտնվի կարգավորվող ընկերությունների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մուտքերի ապահովման գործընթացը՝ լիցենզիաների տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորվող ոլորտներում հանձնաժողովի կողմից կիրառվող տուգանքների, ինչպես նաև կայանները լիցենզիաներով ամրագրված ժամանակահատվածում չգործարկելու, լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների մասով:

Ըստ կանխատեսումների՝ 2026 թվականին նշված աղբյուրներից պետական բյուջե կփոխանցվի շուրջ 10 668 միլիոն դրամ, որից ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը կկազմեն շուրջ 10 242 միլիոն դրամ:

Միաժամանակ, «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքի համաձայն՝ հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց կողմից 2026 թվականին

ևս պետական բյուջե կվճարվեն հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ՝ շուրջ 1 249.5 միլիոն դրամի չափով:



Հանձնաժողովի յուրաքանչյուր տարվա բյուջեն ձևավորվում և հաշվարկվում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն: Մասնավորապես, հաձնաժողովի 2026 թվականի բյուջեն կկազմի 1 249.5 միլիոն դրամ, որի շուրջ 76.1%-ը նախատեսվում է ուղղել աշխատանքի վարձատրության գծով ծախսերին, իսկ 23.9%-ը՝ հանձնաժողովի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերմանը: Ընդ որում, հաձնաժողովի 2026 թվականի բյուջեի շուրջ 13.5%-ը նախատեսվում է ուղղել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից իրականացված ներդրումների տեխնիկական աուդիտի աշխատանքների պատվիրմանը, 9.4%-ը՝ այլ տնտեսական ծախսերին, իսկ 1%-ը՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, կուղղվի հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպություններին՝ վերջիններիս կարողությունների զարգացման և նրանց անդամների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով:



Հանձնաժողովի 2026 թվականի տարեկան բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպվել է հանրային քննարկում, որի մասին տեղեկատվությունը հրապարակվել է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: Քննարկման մասնակիցներին ներկայացվել է հանձնաժողովի բյուջեի ձևավորման մեխանիզմը, ինչպես նաև պարզաբանվել են բյուջետային հայտի նախագծի հիմքում դրված ծախսային հաշվարկ-հիմնավորումները:

9. Հանձնաժողովի 2026 թվականի գործունեության ծրագրի հանրային քննարկումը

Հանձնաժողովի 2026 թվականի գործունեության ծրագրի նախագիծը հանրային քննարկման ներկայացնելու նպատակով հրապարակվել է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև համապատասխան գրություններով ուղարկվել է սպառողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպություններին: Ներկայացված առաջարկությունները կամ ներառվել են ծրագրում, կամ տրվել են համապատասխան պարզաբանումներ:

Հանձնաժողովի 2026 թվականի գործունեության ծրագրով նախատեսված աշխատանքները կներառվեն 2026 թվականի աշխատանքային ծրագրում, որը կհաստատվի 2025 թվականի տարեվերջին և կհրապարակվի հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: